ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հայաստան**

# Տեղական կառավարում

***Ծրագրի նպատակը***` *բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքն ու ապահովել նրանց թափանցիկ գործունեությունը:*

Հայաստանում կա շուրջ 925 տեղական ինքնակառավարման մարմին: Յուրաքանչյուր բնակավայրին ընկնում է մեկ տեղական ինքնակառավարման մարմին: Համայնքները, որոնց սպասարկում են տեղական ինքնակառավարման մարմինները, չափազանց տարբերվում են բնակչությամբ, մեծությամբ, ռեսուրսներով և սոցիալ-տնտեսական պայմաններով: Ծառայություններ մատուցելը կամ նվազագույն սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ լուծելը շատ ավելի բարդ է սուղ ռեսուրսներ ունեցող փոքր համայնքներում: Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո անձնակազմի փոփոխությունը կարող է ազդել տեղական կառավարման արդյունավետության վրա:

Սկսած 2002 թ-ից` Եվրասիա համագործակցություն հիմնադրամը ֆինանսավորել է ծրագրեր` համայնքապետարանները միմյանց կապելու նպատակով ցանցեր ստեղծելու համար: Համայնքապետարանի և համայնքի բնակիչների միջև տեղեկատվության հոսքն ապահովելու միջոցով այդ ցանցերը ներկայումս բարելավում են համայնքապետարանների գործունեության թափանցիկությունը: Դրանք համայնքապետարանների աշխատակիցների կարողությունները զարգացնելու և ծառայությունները համատեղ մատուցելու հնարավորություններ են ընձեռում:

## Թափանցիկ գործունեություն

2002 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Հայաստանում ստեղծեց ցանց, որը միավորում է 10 համայնքապետարաններում գործող տեղեկատվական-վերլուծական կենտրոնները: Բոլոր կենտրոններն աջակցում են համայնքապետարանների աշխատանքների արդյունավետությանը` բնակիչներին տրամադրելով տեղեկություններ համայնքապետարանների գործունեության, ծառայությունների և ծախսերի վերաբերյալ: Հիմնադրամի աջակցությամբ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոնը 10 համայնքներում ստեղծել ու տեղադրել է հատուկ համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է տալիս իրականացնել համայնքապետարանների փաստաթղթավորման աշխատանքները: Կենտրոնը նաև մշակել է օնլայն համակարգ, որի միջոցով համայնքապետարանները հաղորդակցվում են համայնքի բնակիչների հետ: Համակարգը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում հասու լինել բյուջեների ու ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությանը, ստանալ տեղական ինքնակառավարման գործունեության վերաբերյալ իրենց հուզող հարցերի պատասխանները և տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը բևեռել համայնքին վերաբերող հիմնախնդիրների վրա:

## Համագործակցություն

2005 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աջակցել է ընդհանուր առմամբ 84 համայնքապետարաններին` ստեղծելով 10 միջհամայնքային ցանց: Յուրաքանչյուր ցանց ավելի մեծ համայնքներին կապում է սուղ միջոցներ ունեցող ավելի փոքր համայնքների հետ: Այդ ցանցերի միջոցով համայնքապետարանները կարող են տեղեկություններ փոխանակել, համատեղ ուժերով կառավարել միջոցները և լուծել համայնքային հիմնախնդիրներ: Ցանցերի ստեղծումից հետո հիմնադրամն անցկացրեց ցանցերի անդամներին զարգացնելու ուղղությամբ կարիքների գնահատում, որի արդյունքում պարզվեց, որ համայնքապետարանների աշխատակիցները ֆինանսական կառավարման և «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու կարիք ունեն: Այնուհետև, հիմնադրամը վերոնշյալ երկու թեմաների շուրջ կազմակերպեց ուսուցանողների վերապատրաստման դասընթացների շարք: Այն համայնքապետարանների աշխատակիցները, ովքեր մասնակցեցին այդ դասընթացներին, հետագայում խորհրդատուների օգնությամբ ուսուցանեցին նաև տեղական ինքնակառավարման մարմինների այլ աշխատակիցներին: Եվրասիա համագործակցություն հիմնադրամի համոզմամբ` միջհամայնքային ցանցերի կարողությունները զարգացնելու միջոցով հնարավոր կլինի զարգացնել ընդհանուր տեղական կառավարման համակարգը:

## Տեղական կառավարման համակարգի շարունակական զարգացում

Տեղական կառավարման համակարգը զարգացնելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը շարունակելու է աշխատել իր գործընկերների հետ, մասնավորապես հետևյալ ուղղություններով`

- աջակցել տեղական և տարածաշրջանային միջհամայնքային ցանցերի ստեղծմանը և գործունեության ծավալմանը,
- զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները` գործընթացում գործարար շրջանակներին ու հասարակական կազմակերպություններին ներգրավելու համար,
- բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը` ծառայություններ մատուցելու և եկամուտներն ավելացնելու հարցերի շուրջ համայնքապետարանների աշխատակիցների կառավարման հմտությունները կատարելագործելու միջոցով: Համայնքապետարանների ներքին կառավարման համակարգերը զարգացնելու նպատակով նաև մշակել կարգ` ներքին աուդիտի, գնումների, կեղծիքների բացահայտման ու դրանց վերաբերյալ զեկույցներ պատրաստելու մասին:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1993 թ-ից` Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Միջհամայնքային ցանցերը և տեղեկատվական-վերլուծական կենտրոնները՝ ըստ մարզերի




**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝**

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
Հեռ./ֆաքս՝ (374 10) 58 60 95/96
info@epfound.am, www.epfound.am